ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1000-Ա « 15 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի Հ.634-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 04.03.2024թ. հ.Դ-66387-23 գրությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 22.05.2023թ. հ.Կ-22052023-01-0157 որոշումը, քաղաքացի Արարատ Վարդևանյանի 06.06.2023թ. հ.Դ-66387-23 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2023 թվականի մարտի 14-ի «Երևան, Արաբկիր, Հ.Էմինի փողոց հ.109/1 հասցեում՝ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասում քաղաքացիներ Արարատ Վաղինակի Վարդևանյանի և Կարապետ Վաղինակի Վարդևանյանի կողմից ինքնակամ իրականացված կառույցն օրինականացնելու մասին» հ.634-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում «1688610 (մեկ միլիոն վեց հարյուր ութսունութ հազար վեց հարյուր տաս)» բառերը փոխարինել «1357510 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր տասը)» բառերով:

2. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ հետ վերադարձնել քաղաքացիներ Արարատ Վաղինակի Վարդևանյանի և Կարապետ Վաղինակի Վարդևանյանի կողմից Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին ավել վճարված 331100 (երեք հարյուր երեսունմեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումարը:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ